

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011851856 և 2012028493 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 01 >> 03 2021թ. 7-13- 2749

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արման Իսրայելյանի ՄԴ/15736-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Թումանյան փողոցի 54 շենքի 4 բնակարանի բնակիչ Արման Իսրայելյանը դիմումով խնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011851856 և 2012028493 որոշումները՝ նշելով, որ իրավախախտումները կատարվել են պատերազմի ժամանակ, ընտանիքի անդամներին ավելի անվտանգ վայր տեղափոխելու ժամանակ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը վարչական ակտը բեկանելու հիմք չի կարող հանդիսանալ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն Վարչական իրավախախտումների գործերի վարույթը իրականացվում է իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի **251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները**:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ

անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ **բացառապես տվյալ անձի միջոցով**, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վարչական վարույթի ընթացքում չի հիմնավորվել դիմումատուի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարելու հանգամանքը, ապացույցների ոչ բավարար լինելու պատճառով, ուստի վերը նշված որոշումները ենթակա չեն բեկանման:

Ինչ վերաբերվում է դիմումատուի խնդրանքին՝ ապա << Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, տվյալ պարագայում անձի սոցիալական վիճակով պայմանավորված կատարված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունից ազատելու որևէ իրավական ընթացակարգ սահմանված չէ:

Այսպիսով, հիմնավորվել է, որ ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին վերը նշված որոշումներն իրավաչափ են և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011851856 և 2012028493 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումներն ուժի մեջ են մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արման Իսրայելյանին:



**Ե. Կարապետյան**